հեցաւ հրդեհ 'ի թաղի անդ և յաճիւն դատեաց զամենայն տեղիս, այրեցան և տունք Հրէից, և հոյակապ շինուածք մեծատանն՝ չզերծաւ 'ի վնասուց և եկեղեցին Հայոց, զի այրեցան շինուածքն շուրջանակի, և կղմինտիրքն կոխան լեալ ոտից փչրեցան, և զսեղանն կործանեցին այլազգիք, միայն ձեղուն եկեղեցւոյն զերծեալ էր 'ի խանցողաց, եւ այն եւս խախտեալ։ Ի նմին առաւօտու առաքեցին զոմանս 'ի Ղալաթիա և կոչեցին զԳրիգոր Պատրիարք։ և նորա եկեալ դարձեալ սկսաւ քաջալերել և յորդորել զժողովուրդն, զի վերստին ձեռն արկցեն շինել և նորոգել զայրեալ և զխախտեալ տեղիս եկեղեցւոյն, սակայն նիւթքն կարի թանկագին էին յայնժամ՝ զի հրդեհն աւերեալ էր զբազում տեղիս, 'ի Յունղաբանէ մինչեւ 'ի կամարս ջրոց, այլ արհեստաւոր Ակնցի ազգայինք բնակեալ 'ի Պաս գիւղ, եւ այլք ոմանք երեւելիք անձինք 8։ Ետուն իւրաքանչիւր ոք 800 կղմինտր, և այլք ըստ կարի իւրեանց, և մինչեւ յաւուրս երիս ժողովեցին 12,000 կղմինդր, և ծածկեցին զձեղուն եկեղեցւոյն։ Տեսեալ այլազգեաց շարժեցան 'ի նախանձ, զի տեղիք նոցին, սակս նուազութեան նիւթոց, մնային տակաւին աւերակ, և կոչեալ դատաւորի տեղւոյն զեկեղեցպանն դան եհար զնա, մինչեւ եկն հրաման 'ի Բդեշխէն եւ լուեցին այլազգիք, շինեցին զամենայն տեղիս եւ կանգնեցին զսեղանն։ Ապա խորհեցան պատրաստել տեղի լուալեաց, և 'ի բրելն երեւեցաւ ծայր գմբեթի միոյ, ծածկեցին զայն, և ձեռն արկին յայլ տեղի՝ մերձ նմին դտաւ շինուած մեծ լցեալ հողով, և դատարկեցին զմի անկիւնն նորին և եթ։ Փոյթ քահանայից էր միայն օրհնել զսեղանն, զայլ կարեւոր սպասուցն չէր նոցա փոյթ։ Օրհնեաց Գրիգոր Պարոն Տէր զՍեղանն հանդիսիւ եւ ինքն մատոյց զՊատարագն, և յորդորեաց զժողովուրդն լինել նուիրատու 'ի վճարումն պարտուց եկեղեցւոյն, տրանջէին զնմանէ քահանայք, զի ասաց վճարել զպարտս եկեղեցւոյն, և ոչ ասաց հոգալ զպէտս քահանայից, լուեալ զայս Գրիգորի եթող զափսէն, զոր ունէր 'ի ձեռին իւրում՝ ընդունիլ ըզպտուղս հաւատոց ժողովրդեան, եւ նոցա ունայն ելեալ գնացին իւրաքանչիւր 'ի տեղի իւր, և ստահակեալ ոմանց 'ի քահանայից դիմեցին 'ի վերայ Գրիգորի և նախատակոծ